

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Ա լ ո ճ

Այս բառի համար կա միայն երկու վկայություններ.

1. «Դիզաթ անալոցագոյն և վնասակարագոյն ի գետոց է, իսկ Արածանի՝ ալոցագոյն և կենդանարարագոյն և աճեցուցանող»¹;

2. «Զյորձանուտն բաժանէ ընդհարմամբ զանալոցագոյն բերմունք կենցաղոյս»²;

Բնականաբանները տալիս են տարբեր բացատրություններ, բայց ճիշտ կարելի է համարել «սննդարար» իմաստը: Այս առումով միանգամայն բնական է ձևոր հայկազեան բառը: Համեմատությունը լատ. alō «սնել» բառի հետ (բայց ոչ աղ բառի հետ, որ տարբեր ծագում ունի): Լատիներեն բառը ծագում է հ.՝. al- «աճել, աճեցնել, սնել» արմատից. հմմտ. հ. իռլ. alim «սնում եմ», կիմր. alu «սնել» հ. իսլ. ala «սնել, ծնել, պտղաբերել», հուն. αἰ-αἰσ- (αἰ-ը ժխտականով) «անկշտում, անհագորդ»: Հայերեն ալոց-ը կարող էր ծագել *alosko- նախաձևից:

Ա տ ա յ ա ն

Այս բառը հանդիպում է «Սոփերքի» 13-րդ հատորում³ վահան Գողթնացու վկայաբանության մեջ՝ «հարկ, տուրք» իմաստով: Հրատարակիչը այն համարում է արաբական փոխառություն՝ իռիլյան «պարտք» բառից: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1², էջ 286), մեկնաբանելով այն dayn ձևից, իմաստը հարմար չի համարում:

Հավանական է բառի իրանական ծագումը. հմմտ. մ. պրսկ. atēn «եկամուտ», մանիք. 'dyn «մուտք» (*ati-ayana-)⁴:

Գ ու ճ

Այս բառի բուն իմաստն է «ծունկ» ծնկոսկը: Հանդիպում է միայն կայուն բառակապակցություններում և բաղադրություններում՝ ի գուճս իջա-

¹ Փ ի լ ո ճ ն Ե ր ր ա յ ւ ճ ի. Սնացորդք ի Հայս. Վենետիկ, 1826, էջ 10:

² Սոփերք, ԺԵ, Վենետիկ, 1856, էջ 63:

³ Սոփերք, ԺԳ. Վենետիկ, 1854, էջ 14:

⁴ Հմմտ. А. Перхванян. Сис. нид. и ив. (уде. ник. Грев. н, 1973, с. 442. Հեղինակը այստեղից է բխեցնում ասեան բառը, որ իմաստով հենու է, և որի համար ալելի հայնական է հնդեվրոպական ծագումը:

նել «ծնկի գալ, շոքել», զնիլ «ծնրադրել», զնկել «թեքել, ծռել, կորացնել», ընգնել, ընկնել «ծնկի բերել, հաղթել» և այլն: Հաճախակի է հանդիպում հին մատենագրության մեջ: Բարբառներում առկա է միայն բայական ձևերով՝ «ծռ(վ)ել» իմաստով: Որևէ հավաստի ստուգաբանություն չունի (հմմտ. ՀԱԲ, 1, էջ 589):

Գուն-ը ակնհայտորեն ծագում է իրանական աղբյուրից, հավանաբար պարթևերենից՝ *gūn- ենթադրական նախածնից, որ պետք է ծագեր հնդեվրոպական *geu- «ծռել, թեքել» արմատի՝ *-k- ածականով ձևից: Այն չի պահպանվել: Սակայն հ.-հ. արմատից իրանական լեզուներում պահպանվել են մեծ թվով այլ կազմություններ, որոնցից հիշենք նոր պրսկ. gūzak «ծնկոսկրը», gōša «առկյուն», միջ. պրսկ. gund, gundak > հայ. գունդ, գնդակ և այլն:

Դ ա մ ա ռ ճ ա կ

Այս բառը մեկ անգամ գործածված է Հովհաննես Ոսկերեքանի վարքի XII դարի հայերեն թարգմանության հետևյալ հատվածում. «Որպէս իմաստասէր խօսել և գործել և շխորհել, և խօսել այդպէս ի մէջ դամարճակաց ժողովրդեանն»⁵: Նկատի ունենալով, որ մի այլ ձեռագրում առկա է դէմալանջաց ձևը, Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1, 617) բառը համարում է անստույգ: Հստ տեքստի նա վերականգնում է «ունկնդիրների բազմություն» իմաստը:

Այսուհանդերձ դամարճակ բառի առկայության մասին կարծեք թե վկայում է սողդերեն d'mevk (dāmōrk) բառը՝ «աշխարհիկ» իմաստով⁶: Հայերեն բառի Բ-ն կարող է նույնպիսի հավելում լինել, ինչպես դարսել բառի Բ-ն՝ դասել ձևի դիմաց:

Թ ո ղ, ք ո յ լ

Թող արմատը և նրա քոյլ տարբերակը հայերենի հնագույն բաղադրիչներից են՝ հատուկ նրա թե՛ գրավոր և թե՛ բարբառային տարբերակներին: Այս հանգամանքը խոսում է նրանց բնիկ հնդեվրոպական ծագման մասին, մանավանդ որ որևէ այլ հավաստի աղբյուր չի մատնանշված: Եղած վարկածներից ամենից ավելի հավանական են երկուսը՝ պատկանելիությունը հնդեվրոպական *tel- «բարձրացնել. կրել» կամ *tel- «հանգիստ լինել» արմատներից մեկին: Սակայն իմաստային նկատառումներով երկու ստուգաբանություններն էլ կասկածելի են համարվում: Հ. Աճառյանը (ՀԱԲ 2², էջ 194—195) չի դասում հնդեվրոպական արմատների շարքը, և միայն է. Պոկոռնին է, որ հնարավոր է համարում առաջին ստուգաբանությունը՝ ելնելով «թողնել, կրել, հանդուրժել» իմաստներից:

Հայերենի համար ամենաուժեղ կովանը տալիս են խեթալուվական լեզուները՝ խեթ. t/dala-, t/dēlla- «թողնել, արձակել», լուվ. tala- «թողնել», լիկ. titei-, ttil- «թողնել, բերել», որոնց իմաստները բացահայտ

⁵ Պատմութիւն վարուց... Ս. Յովհան. Ոսկերեքան հայրապետին Կոնստանդնուպոլսոյ, Թրգմ. ի յունկանէ, ի հայս ի Գրիգորի կաթողիկոսէ վկայասէր կուէցելոյ. Վիեննայի, 1751, էջ 17:

⁶ А. Н. Рогоза. Согдийские фрагменты. М., 1980, с. 96.

զուգահեռություն են ցույց տալիս հայերենի իմաստների հետ: Հետազոտողները խեթալուական բայը հանգեցնում են հնդեվրոպական հիշյալ արմատներից առաջինին, թեև հնարավոր են համարում պատկանելը նաև երկրորդին: Ստուգաբանությունը ավելի հավաստի դարձնելուն խանգարել է ստուգաբանողների՝ հայկական զուգահեռին անժանոթ լինելը: Հայերենի նյութը ոչ միայն հաստատում է այն, այլև վկայում է հայ-խեթական մի կառույցի բացառյալ զուգաբանության առկայության մասին: Հայերեն թողում բայը ցույց է տալիս հին *ս-ով հիմք, որն ունեցողները հայերենում սակավաթիվ են. թոյլ-ը պատկանում է հին *լօ-ով կազմություններին՝ *տօլի- > թոյլ, ինչպես *ալօ > ալլ:

Խ Ե Լ

Գրաբարում, ժամանակակից գրական լեզվում և բարբառներում լայնորեն տարածված այս արմատը հնում առանձին դործածվել է միայն անեղաբար՝ խելի ձևով, որ այժմ եզակիի սովորական ձևն է: Եղած վկայությունների համադրությամբ կարելի է եզրակացնել, որ սկզբնական իմաստը եղել է «գլուխ, գանգ», որ առկա է խելի նախնի «նավի ղեկի կողմ», խելի կամբջին «կամբջապետի» արտահայտությունների, այլև «կտուր, տանիք» (որպես «տան գլուխ») գործածության մեջ. «պարունակիչ» → «պարունակելի» անցումով սրա հետ կապված է «գլխուղեղ» իմաստը: Ամենից ավելի սովորական են փոխաբերական արժեք ունեցող գործածությունները՝ «կարողություն, վարպետություն, հնարք», որոնք միակ բնորոշ են ժամանակակից գրական լեզվի համար: Բուն գրական կազմություններում արմատը հանդես է գալիս առանց Լ-ի, բարբառներից գրական լեզվին անցած բառերում՝ նաև Բ-ով: Ստուգաբանության եղած փորձերը, որոնք բերված են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (2-րդ հատոր, էջ 355), հեռու են ճշմարտանման լինելուց և գիտական որևէ արժեք չունեն:

Հայտնի է, որ հայերենի խ բաղաձայնը ծագում է հ.-ե. շնչեղ խուլ *kh-ից, որի բաշխումը հնդեվրոպական տարբեր լեզուներում և տարբեր բառերում հավասարաբեռ չէ: Որոշ դեպքերում այն հանդես է եկել որպես *k-ի դիրքային և գործառական տարբերակ: Այս վերջին հանգամանքով են բացատրվում հնդկ. k/kh, հուն. χ/κ և հայ. ք/խ հերթագայությունները՝ հուն. χελίς, χελίς (ատտ.) «կող» հայ. ցաք/ցախ, հ. հնդկ. śakalā «տաշեղ» śākha «ձյուղ». բնական է, որ որոշ բառերում պահպանվել է այս տարբերակներից միայն մեկը:

Հայ. խել- արմատը բացահայտ զուգահեռներ ունի սանսկրիտում և հատկապես գերմանական լեզուներում՝ հ.-ե. *(s)kel-ից, որ, ինչպես ասվեց, կարող էր ունենալ նաև *(s)khel- տարբերակը. հմմտ. հ. հնդկ. kalā - «արվեստ», նորվ. շվեդ. skalle «գանգ», հ.իսլ. skillja «բաժանել, տարբերել, հասկանալ». սկանդինավյան աղբյուրից է փոխառված անգլ. skill «վարպետություն, կա-

7 А. Ю. Айхенвальд, Л. С. Баюн, Вяч. Вс. Иванов. Материалы к реконструкции культурно-исторического процесса в древней Малой Азии. 2. Исследования по этнографии и языкам древней Анатолии и античного северного Причерноморья, М., 1987.

րոգություն» բառը. գերմանական այս բառերը բխեցվում են **(s)kel-* «կըտ-րել, հատել, անջատել» արմատից՝ իմաստի յուրահատուկ զարգացմամբ, որ առկա է նաև հայերենում: Ծիշտ է, հ. հնդկ. բառը փորձում են կապել դրավիդյան բառերի հետ, բայց հայերենի նյութը ավելի հավաստի է դարձնում հնդեվրոպական ծագման վարկածը, մանավանդ որ հ. հնդկ. այս բառի հետ միասին կա *kala* «փոքր մաս» համանունը:

Խել- արմատին լիզ հերթագայությամբ թերևս պետք է միացնել խելակ (ձեռ. տարբերակ՝ խեղանակ) բառը, որ հանդիպում է Երեմիայի «Բառգիրք հայոց»-ում «հաստատուն կամ գլխավոր» մեկնությամբ: Նույն խել արմատն է այդ բառարանի խելն «բերան և շուրթն» և խելս նախն «բերան և շրթունքն է» բառահոդվածներում:

Խ Ե Գ

Հայ մատենագրության մեջ *V* դարից տարածված և բարբառներին հայտնի այս արմատը անկախ գործածությամբ ունեցել է «կավե աման. խեցեմորթի կամ կրիայի պատյան» իմաստները: Հայն գործածություն ունի սրանից ի վերջածանցով կազմված խեցի «թրծված կավ, բրուտի աման» բառը: Ե՛վ խեց և՛ խեցի ձևերից կան զանազան բաղադրություններ: Հ. Աճառյանը (ՀԱԲ 22, էջ 360) հայերենից փոխառված է համարում վրաց. *keci* «կավ. կավե աման, կրիայի և խեցեմորթի պատյան» բառը:

Ստուգաբանական փորձերից ամենից ավելի ճշմարտամոտ է հնդեվրոպական ծագման վարկածը. Հ. Պետերսոնը կապում է, մասնավորապես, խոց ու խեցեպ բառերի հետ և բխեցնում հ.-հ. **sked-* «ճեղքել» արմատից կազմված **khed-s'*- ձևից, որտեղից են հ. հնդկ. *skhaḍa!* «ճեղքում է» և հուն. *σχιζω* «տախտակ» (°)⁸:

Պետերսոնի ստուգաբանությունը թեև հնարավոր է, բայց մենք ավելի հավանական ենք համարում այն բխեցնել համանուն **sk'ed-* «ծածկել (°)» արմատի **(s)k'hed-* տարբերակից, որտեղից ծագում են հ. հնդկ. *chattram* «շիրմա, առաջակալ, ծածկոց», *chāḍiṣ-* «ծածկ, կտուր» բառերը, այսինքն՝ խեց-ի նախնական իմաստն է «պատյան, ծածկոց»:

Կ ա (յ)

Կա- արմատաճիմքը հանդիպում է կամ բայի մեջ, որի կատարյալն ունի կաց ձևը: Այն հանդիպում է նաև կայ ձևով, որի հարաբերությունը կամ ձևին առաջին հայացքից նույնն է, ինչ բամ «ասել, խոսել» բայինը՝ բայ բառին:

Կա-ի ծագման մասին բերված կարծիքներից (հմմտ. Հ. Աճառյան, ՀԱԲ 22, էջ 504—505) քիչ թե շատ հավանական է համարվում համեմատությունը հ.-հ. **g^ua* «գնալ, գալ» արմատին պատկանող ձևերի հետ, որ բերվում է Յ. Պոկորնու բառարանում⁹: Սակայն իմաստի ակնհայտ տարբերությունը,

⁸ A. Petersson. Arische und armenische Studien. Lund, S. 123.

⁹ J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. I. München und Bern, 1959, S. 462.

նույնիսկ հակադրությունը, այս համեմատությունը դարձնում է խիստ կասկածելի:

Այժմ հնարավոր է տալ մի այլ ստուգաբանություն, որ, ցավոք, հնչյունական առումով լիովին անբասիր չէ, բայց հավանական է: Ինչպես հայտնի է, կամ—կացի ձևերը ակնհայտ զուգահեռներ ունեն կեամ—կեցի ձևերի հետ, որոնք իմաստով էլ նրանց մոտ են: Վերջիններս, ինչպես հայտնի է, ծագում են հ.-ե. *g^uel- արմատից, որ ունի «ապրել, կենալ» իմաստը, հմմտ. հուն. ζῆναι «կապրեմ», սլավ. žiti (ռուս. жить) «ապրել» և այլն. անվանական *g^uoio- ձևից են ծագում հ. հնդկ. gaya- «տուն, բակ, տնտեսություն», ավ. gayō «կյանք», սլավ. *gojъ «կյանք» բառերը:

Հայ. բառերի ա-ն դժվար բացատրելի է, եթե շենթադրենք թուլացած *ə կամ *ե (շվա առաջին կամ շվա երկրորդ) ձայնավոր: Կարելի՞ է արդյոք ենթադրել *g^uelա նախաձև *a-ի հետադարձ ազդեցությամբ *e-ի վրա (առնմանություն), ինչպես *esr > ar-իւն, *yesr > qar-ուն ձևերում: Անհնար չէ, իհարկե, ենթադրել նաև հ.-ե. *g^ua- և *g^uel- արմատների բաղադրվում (խառնում, կոնտամինացիա):

Եթե հայ. բառերը հնդեվրոպական ծագում ունեն, ապա ուրարտ. ka- «վեր կենալ, երևալ (°)» (ըստ Դյակոնովի) բայաձևը կարող է փոխառված լինել հայերենից:

Դժվար է ասել, կալ-ը կապ ունի՞ արդյոք կանգ արմատի հետ:

Կ ո ն ք ե ո

Այս բառը եկեղեցական զգեստավորության մի զարդի անուն է: Եղած ստուգաբանությունները (հմմտ. Հ. Աճառյան, ՀԱԲ, 2², էջ 633—634) հեռու են ճշմարտանման լինելուց:

Բառի հունական ծագումը կասկած չի հարուցում և այն, ամենայն հավանականությամբ, կապված է 𐎧𐎺𐎠𐎫 > հայ. կոնք բառի հետ, որ զգոգավոր մեծ աման, խեցի, խեցեմորթ» իմաստների հետ միասին ունի նաև «վարագույր» իմաստը (հունարենում՝ «խորանի խխնջաձև ծածկոց»): Հուն. բառի 𐎧𐎺𐎠𐎫-ն ածանցյալից է ծագում կոնքեղ, (կոնքիլ, կոնքիղոս) «ծիրանի ներկ տվող խեցեմորթ» բառը: Կոնքեո բառի աղբյուրը թերևս պետք է համարել հուն. բառի նվազական 𐎧𐎺𐎠𐎫-ն ձևը կամ, որ ավելի հավանական է, 𐎧𐎺𐎠𐎫-ն «խեցեղարդ, խեցիով զարդարված» բառը:

Կ տ ղ ի լ

Այս բառը հանդիպում է V դարի հայ դասական մատենագրության մեջ, և նրանից կազմված են կտղուցք, կտղանք գոյականները: Այս ձևերը մինչև այժմ էլ գործածական են նոր գրական լեզվում: Կտղիլ նշանակում է «սեռական ուժեղ ցանկություն զգալ, խիստ գրգռվել»:

Նոր հայկազյան բառգրքի հեղինակների կողմից կատաղի և խտղիլ բառերի հետ կապելու փորձերից բացի ստուգաբանական որևէ այլ ուշագրավ փորձ չի կատարվել:

Կարծում ենք, որ հայերեն արմատը լավ զուգահեռներ ունի գերմանական լեզուներում՝ հ. իսլ. kitla հ. անգլ. citellian, գրափոխությամբ՝ tinclian, բրյու.

kittle, անգլ. tickle, հ. վ. գելմ. kizzelōr, գերմ. kitzeln «խտղտ(ացն)ել», Kitzel «խտիղ. քոր, մարմաշ», zick'en «գրգռել»:

Ա. Վալդեի և Յ. Պոկոռնու հնդեվրոպական համեմատական բառարանում և սրա հիման վրա կազմված Յ. Պոկոռնու հնդեվրոպական ստուգաբանական բառարանում¹⁰ գերմանական բառերը բերվում են *geid- «ծակել, խտղտացնել» արմատի տակ և համեմատվում հայերեն կէտ բառի կիտուած և կիտուկ ածանցյալների հետ: Մեր աշխատություններում կէտ «կետ, նպատակ» բառի հետ ստուգաբանորեն կապվում են կէտ «իշամեղու» և կիճ «խայթոցի ծայր» բառերը: Քանի որ կէտ բառը նշանակում է նաև «կենտ» և այս իմաստով կապվում է, ինչպես Հ. Աճառյանն է ասում (ՀԱԲ 2, էջ 583), կենտ բառի հետ, և քանի որ ռնգային *-ո- հավելվածն առկա է նաև անգլերեն tinclian (*kintlian) ձևի մեջ, հնարավոր է արձանագրել նաև կենտ բառի պատկանելիությունը այս արմատին:

Այսպիսով, կէտ, կենտ և կտղիլ բայի *կտիղ արմատները կապված են և ծագում են *geid-/gid- արմատից, ընդ որում երրորդը՝ *-լ- ածանցային տարրով, գերմանականում այդ -լ-ն ցույց է տալիս գործողության հաճախականություն:

Առայժմ բաց է մնում կտիտ «խուզարկություն, փնտռուք, շարշարանք» և կտուտ «շարշարանք, տանջանք» (ինչպես նաև «նվագում») բառերի կապի հարցը:

Ն Է Ե Է Մ

Այս բառը հանդիպում է Գրիգոր Նարեկացու տաղերից մեկի հետևյալ տողում. «Յունից նրբենից կից ի մի կից կամար, նէճէմ, թէ նէճէմ միջօրէի ժամ»¹¹: Այս բառը Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» չի արտացոլվել, և ստուգաբանության որևէ փորձ չի կատարվել: Տեսքն այնպիսին է (եռաբաղաձայնություն), որ կարելի է ենթադրել արաբական ծագում: Եվ իրոք, արաբերենում կա ٢٤٣٣ «դուրս գալ, երևալ. աստղերով գուշակել» արմատը, որից կազմված են ٢٤٣٣٣٣ «աստղագետ, բախտագուշակ, ٢٤٣٣٣٣ «աստղ» բառերը: Քանի որ երկու վանկում էլ առկա է է ձայնավորը, որ կարող էր արտացոլել փոխատու աղբյուրի ٢٤-ն և հանդես գալ լիաձայնությամբ երկրորդ վանկում, հայերենի աղբյուրը կարող էր լինել արաբերենից փոխառյալ պրսկ. ٢٤٣٣٣٣ «աստղ, երկնային լուսատու» բառը (>*ՆԷՆԷմ >ՆԷՆԷմ):

Հետաքրքիր է նշել, որ Նարեկացու տաղերի թարգմանության մեջ, որ կատարվել է Արշավիր Մխիթարյանի կողմից (մեծ ազատությամբ), յուրից ձևի դիմաց ընտրվել է յօնից տարբերակը, և հիշյալ հատվածը թարգմանվել է հետևյալ կերպ.

նուրբ հոնքերը կից կամարներ,
աչքերն վառ են որպես աստղեր
ու դուք ինչպես արևը բարկ¹²:

¹⁰ A. Walde—J. Pokorny. Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen I, Berlin und Leipzig, 1927, S. 544; J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern und München, 1959, S. 355.

¹¹ Գրիգոր Նարեկացի. Տաղեր և գանձեր. Նրևան, 1981, էջ 120, 123:

¹² Գրիգոր Նարեկացի. Տաղեր. Նրևան, 1957, էջ 40—41:

Խարգմանի՝ը թերես աստղեր ասելով նկատի ունի հենց նեճեմ քէ նե-
նեմ կապակցությունը:

Ողջագուրել, գուրգուրալ

Այս բառերից առաջինը հայ մատենագրության մեջ ավանդված է դեռ
V դարում, հրկրորդը հատուկ է միայն ժողովրդական խոսքին: Երկուսի հա-
մար Հ. Աճառյանը (ՀԱԲ, 12, էջ 598) վերականգնում է գույր արմատը: Ող-
ջագուրել նշանակում է «ողջունել, բարեկել» և «փաթաթվելով համբուրել»,
գուրգուրալ-ը «սիրել, խանդաղատել»:

Հնարավոր է կապը հ.-ի. *ghou- արմատի հետ՝ *ghou-ro > գույր. հմմտ.
լատ. javeo, -ere «նպաստել, աջակցել, բարյացակամ լինել, ցանկանալ, հա-
վանություն տալ», հ. սլավ. gověti «ակնածել, պատկառել»: Սրանց միաց-
վող գուլեմ-ը ամենայն հավանականությամբ գալիս է իրանական աղբյուրից,
գորով-ն էլ այլ ծաղում ունի: Հայերենն առանձնակի է կանգնած իր *-ro-
անվանական ածանցով, որից կազմված են բայական ձևերը:

Պասկուն

Այս թռչնանունը, որ նշանակում է «կորճ, գառնագղ, գրիֆ» (լատ.
gryphus), հանդիպում է դեռ V դարի մատենագրության մեջ: Սրանից, ըստ
Հ. Աճառյանի՝ փոխառված են վրաց. paskunji, paskunji ձևերը: Այն շունի հա-
վաստի ստուգաբանություն: Առաջարկված ստուգաբանությունները, որոնք
բերված են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (4, էջ 30),
չի կարելի լուրջ համարել: Պասկուն-ի աղբյուրն է պահլավական ԽՏԿՄԸ
(գրված ԽՏԿՄԸ) նույնիմաստ բառը¹³:

Սոյր

Այս արմատը հանդիպում է սուրալ «վազել, սլանալ» և արշաւասոյր,
գաղտասոյր բառերի մեջ: Առաջարկված ստուգաբանությունները հեռու են
ճշմարտանման լինելուց (հմմտ. Հ. Աճառյան, ՀԱԲ, 4, էջ 242):

Արմատի իրանական ծագման վրա մեր ուշադրությունը հրավիրել է
Գ. Ասատրյանը. հմմտ. մանիք. սողդ. swō (sod) «արագ զնալ», բուդդհ.
սողդ. swō swd'ā (sōd sōdān) «արագ, արագորեն»: Հ Բեյլին այն բխեցնում
հ.-ի. *sk'eu- արմատից՝ *-d- աճականով¹⁴:

Սուրճալ ձևը պետք է համարել սուրճանդալ բառի հետ կապելու ար-
դյունք:

Վանանդ

Այս անվամբ կոչվում են Արարատ նահանգի գավառներից մեկը և գյու-
ղեր Վասպուրականի Գողթն և Սյունիքի Քաշունիք գավառներում:

Անունն իրանական ծագում ունի. այսպես է կոչվում, օրինակ, պահլա-
վերենում երկնքի համաստեղություններից մեկի՝ Քնարի համաստեղության
ամենապայծառ աստղը (Vega):

¹³ Այս բառի համար տե՛ս D. N. Mackenzie. A Concise Pahlavi Dictionary, London, 1971.

¹⁴ H. W. Bailey. Dictionary of Khotan Saka, Cambridge, 1970, p. 12.

Академик НАН РА Г. Б. ДЖАУКЯН

В статье даны этимология следующих армянских слов: alos' 'питательный, кормящий' (*alos' - от индоевропейского корня al- 'рости; выращивать, питать'), at'ayan 'подать, наог' (заимствование из иранского и точно как ср. ср.-перс. at'p 'доход' из иран. at'i-a yāna-) gēd 'ислено; коленная чаша' (заимствование из иранского ист. чинки: *gēd' от ниде в о ей коно *geu 'считать'), damargak 'публик; душ-теля, аудиория' (з имств в ниде из иршкого источника; ср. согд. d'm'uk 'святский'), t'o(i)um 'отвлять, пускть, стпускать', t'oyl 'слый' (*t'o(i)-, t'o(i)- от *el- 'поднимать, нести; тер и сить терпеть'; ср. хетт. t/dala-, t/d'at'la-, от влять, пускать, отпускать - дув tal'- 'от влять, пускать'), vel-k' 'глава, главночст; мзг; ум, умение' (*kne - от *(s)ke - 'резать, отрезать, от д лять'; ср. сканд. -англ. s.ill 'ловксть, умение, иск-ство'), xes'(i) 'глиняная посуда' (*k'ned-sk' - от *k'ed- 'покрыв.т.' или *k'led-sk- от *(s)kes - 'колоть, раско лывать') ka(y)- 'им тья быть налицо' (*g'ei-ā - от и доевр п.й коно *g'ei- 'жить'), konker (внд украшения - з им тв ва не из греч. κορυμνίσκος или κορυμνίσκος), *k'it- 'течка' в k'itil k'itil - т ниде-европэйского *keld- 'шекет т.', ср. др.-исп. kitila, н.-м. kitzeln 'шекетать', нефем 'звезда' (из п.-рс. nājm < араб. najm, goyr в gurgural 'любигь, умня вья', olja-gurel 'пр и ет. в о в а ть' (*ghou-ro- от индоевропейского *ghou-; ср. л.т. laueb 'блзговолить'), rak'ne 'риф' (заимствование из иршкого источника; ср. ср.-перс. baškēd, -oys в sural 'мч.т.с' (заимствование из иранского источника, ср. м. нх согд. б. 'бы тро ити'), Vānān (н.звние местностей; ср. ср.-перс. Vānān id. Lera (звзд в о зв здии Леры).